Գ. Ն. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ. Հայաստանը Լանկ-Թամուրի բռնկման դեպքերի առիթով (1386—1500 թթ.). ՀՍՍՀ «Գիտություն» հրատարակչություն. Երևան. 1997. 369 էջ։

Հայկական միջնադարը մշտապես եղել է առանձին ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում։ Նրա հիմնահարցերից շատերը, սակայն, առ այսօր կարոտ են նոր մեկնաբանությունների, ճշգրտումների և նոր սրբագրումների։ Գ. Կիրակոսյանը զբաղվող աշխատությամբ նպատակ է հետապնդել հանգամանորեն քննարկել և լուսաբանել հայ ժողովրդի ողբերգական լեցուն մի ժամանակահատվածի իրական պատմությունը, որն իրեն հիմնահարցը լայն կտավի վրա ներկայացվում է առաջին անգամ։ Հեղինակն օգտագործել է բազմաթիվ սկզբնաղբյուրներ՝ հայ և օտարազգի պատմիչների երկերն ու ժամանակագրությունները, հայերեն ձեռագրերի հիշատակարանները, ականատեսների ուղեգրությունները և հատկապես վիմական արձանագրությունները, որոնցով այնքան հարուստ է Հայկական լեռնաշխարհը։ Մեր քարակերտ մատյաններում, բարեբախտաբար, ստույգ և հավաստի տեղեկություններ են պահպանվել միջնադարյան Հայաստանի իշխող ավատական տների, իրավաքաղաքական և տնտեսական հարաբերությունների, կրթամշակութային օջախների և հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտների մասին։ Գրքի հարյուրավոր էջերում այս կամ այն հեղինակի հետ բանավիճելիս Գ. Կիրակոսյանի կռվանները առավելապես վիմագրերն են, նրանց հավաստի տեղեկությունները։

Ի շարս բազմաթիվ սկզբնաղբյուրների, հեղինակն իրավացիորեն ընդգծել է հատկապես Թովմա Մեծոփեցու «Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց», Գրիգոր Ծերենց Խլաթեցու «Ցիշատակարան աղէտից» երկերի պատմագիտական արժեքը և սկզբնաղբյուրային կարևորությունը XIV—XV դդ. իրադարձությունները առավել ստույգ լուսաբանելու համար։ Նա հարգանքի տուրք է մատուցում նախորդ գիտնականների՝ Ղ. Ալիշանի, Հ. Մանանդյանի, Գ. Հովսեփյանի, Լ. Խաչիկյանի, Լ. Բարայանի, ինչպես նաև ժամանակակից մի շարք պատմաբանների (Բ. Ուլուբաբյան և այլք) վաստակի հանդեպ, անկախ այն պարագայից՝ համաձայն է, թե ոչ նրանց մեկնաբանություններին կամ տեսակետներին։

Քաղաքական կամ վարչատարածքային հարցերին անդրադառնալիս Գ. Կիրակոսյանը սուր դրչով, սակայն հայ գիտնականին վայել արժանապատվությամբ, հերքում է ակադ. Զ. Բունիաթովի և նրա անփառունակ աշակերտների՝ Զ. Իրբահիմովի, Օ. Էֆենդիևի, Ֆ. Մամեդովայի, Ս. Աշուրբեյլիի և այլոց հավակնոտ տեսությունները՝ մասնավորապես Արցախ և Ալունիք հայաշունչ նահանգները Կովկասյան Աղվանքին երևակայորեն բռնակցելու և մշակութային արժեքները սեփականելու մղումով չեղած հիմքեր որոնելու ուղղությամբ (տե՛ս էջ 39—46)։ Սակայն, ինչպես ընդունված է ասել՝ փաստերը համառ են, և անկարելի է դատարկ հայտարարություններով ազավաղել ու կեղծել ոչ միայն հայ, այլև ազգրեչանակտն ժողովուրդների պատմական անցյալը մեր օրերի ըգկտված, թեև մասամբ արդեն շտկված քաղաքական քարտեզի հիման վրա։

Թեմատիկ առումով զբաղվող աշխատությունը կարելի է բաժանել երկու հիմնական մասերի. ա) Հայաստանի քաղաքական-տնտեսական իրավիճակը XIV—XV դարերում և բ) Նույն ժամանակաշրջանում եղած հայ ազնվական տոհմերը, որոնցում պատմաբանասիրական մանրադրին քննությամբ և փաստական ճշգրտումներով ներկայացված է Դուքյան իշխանական տունը։

Առաջին մասի շարադրանքը, մեր կարծիքով, շատ հաջողված է։ Տպավորիչ են հեղինակի խորաթափանց վերլուծությունները, հիմնավոր փաստարկումները, պատմական երևույթների գնահատման մասնագիտական կարողությունը։

Դեպքերին ականատես գրիչների վկայությունների և պատմական սկզբնաղբյուրների հիման վրա Գ. Կիրակոսյանը ներկայացնում է արևելյան բռնակալ Լանկ-Թամուրի և նրա հաջորդների ամրողջական կերպարները, նրանց ավերածությունները Հայաստանում և հարակից երկրներում (էջ 47—73)։ Հոգեցունց է Սեբաստիա քաղաքը կեղծուպատիր խոստումներով գրավելուց հետո տեղի ունեցած նախճիրը, երբ Թամուրի հրամանով ողջ-ողջ թաղվեցին 3000 մարդիկ (էջ 64—65)։ Ի դեպ, պատմական վկայությունները մեջբերելիս Գ. Կիրակոսյանն իրեն

հատուկ զգաստ քննության է ենթարկում դրանց հավաստի կամ ոչ հավաստի լինելը՝ ցույց տալով իր անաչառ վերաբերմունքը (էջ 69, 100—101)։

Աշխատության հաջորդ բաժնում ներկայացված են թուրքմեն ցեղերի արշավանքները և Հայաստանի քաղաքական-տնտեսական ծանր վիճակը Կարա-կոյունլուների, ապա նաև Ակ-կոյունլուների տիրապետության և ռազմական ընդհարումների շրջանում։ Գ. Կիրակոսյանը տալիս է այս երկու արյունռուշտ ցեղերի հանդես գալու նախապատմությունը, Հայաստանում իշխելու, պատերազմական գործողությունների, համատարած ավերի ու ավարի նկարագիրը։ Հեղինակը պատմության տեսանկյունից ելնելով՝ նկատում է, որ այլէթնիկ կազմավորումներ ունեցող բռնապետությունները վաղ թե ուշ, որևէ առիթով արագորեն կազմալուծվում են և կորչում պատմության ասպարեզից՝ լոկ հուշ թողնելով հետագա սերունդներին։

Լանկ-Թեմուրի հսկայածավալ կայսրությունը արագորեն քայքայվեց բռնակալի մահվանից անմիջապես հետո (1405 թ.), երբ գահակալելու և միանձնյա տիրելու փառասիրական մղումով սկսեցին իրար հոշոտել նրա զավակներն ու թոռները։ Այս մասին հանգամանորեն շարադրված է ներկա աշխատության բազմաթիվ էջերում։ Իրերի բերումով թուրքմեն ցեղերի ռազմական բախումները տեղի էին ունենում առավելապես Հայաստանի տարածքի վրա, որից բնականաբար տուժում էր հայ ազգաբնակչությունը, իսկ նրա ազնվական դասը՝ իշխանական տները, իրենց զորաջոկատներով ստիպված էին ակամա մասնակցել այս կամ այն ցեղապետի հրահրած պատերազմական գործողություններին՝ հաճախ կրոնափոխ լինելու պարտադրանքով։ «Հայ ֆեոդալների մասնակցությունն այդ պատերազմներին,—գրում է Գ. Կիրակոսյանը,—պատճառաբանվում է բռնի ուժի այն քաղաքականությամբ, որը վարում էին ռազմաքոչվորական ցեղերի առաջնորդները նվաճված երկրների ֆեոդալների նկատմամբ» (էջ 81)։ Միանգամայն ընդունելի դրույթ է։ Հեռու չգնանք. հիշենք Օրբելյաններին և Պռոշյաններին, որոնք իրենց զինական ուժերով ստիպված էին մասնակցել մոնղոլական նվաճողական արշավանքներին՝ բոլոր ուղղություններով։ Սակայն, այնուամենայնիվ, մոնղոլ խաները Լանկ-Թեմուրներ չէին, թեև նրանք նույնպես կազմակերպում էին արյան բաղնիքներ հատկապես այլախոհ իշխաններին ու արքաներին վերացնելիս (Հասան-Ջալալ, Զաքարե, Դեմետրե և այլք)։

Աշխատության հեղինակը առանձին բաժնով մանրակրկիտ ուսումնասիրում է Լանկ-Թեմուրի և թուրքմեն ցեղերի քաղաքականության ողբերգական հետևանքները Հայաստանի և նրա ժողովրդի համար՝ ընդգծելով հատկապես ծանր հարկապահանջության կործանարար ազդեցությունը ժողովրդական լայն զանգվածների վրա (էջ 147—167)։ Թուրքմեն իշխանավորների կողմից ամենաբիրտ եղանակներով գանձվող 30 անուն հարկերն ու տուրքերը կեղեքում և տնտեսապես քայքայում էին հարկատուներին։

Գ. Կիրակոսյանը հիմնավորապես հերքում է ականավոր արևելագետ Ի. Պետրուշևսկու այն տեսակետը, ըստ որի, XV դ. գոյություն ուներ ադրբեջանական պետություն (էջ 155)։ Այդպիսին չկար, իրավացիորեն նկատում է ուսումնասիրողը, քանզի այդ ժամանակ ադրբեջանական ազգություն կամ ժողովուրդ պարզապես չկար։ Ի. Պետրուշևսկու հիշած ադրբեջանական պետության հիմնատարրը թուրքմենական և շիրվանշահերի տարբեր ցեղերն էին, ծանոթագրում է Գ. Կիրակոսյանը գրքի նույն էջի տողատակում։

Հեղինակը հատուկ անդրադարձել է քննարկվող ժամանակաշրջանում գոյություն ունեցած մի շարք հայ իշխանական տների՝ Դոփյանների (էջ 168—227), Հասան-Ջալալյանների (228—248), Օրբելյանների (էջ 249—286), Պռոշյանների (էջ 287—308), Ազիզբեկյանների (էջ 309—322) և այլն, երբեմնի հզոր (Վաչուտյաններ) կամ համազգային ճանաչում չունեցող տոհմերի ներկայացուցիչների կատարած դերին։ Կարևորն այն է, որ Գ. Կիրակոսյանը ձեռագրերի հիշատակարանների և վիմական արձանագրությունների փաստական նյութերի համեմատական վերլուծությամբ կատարել է ճշգրտումներ, արել շահեկան դիտողություններ, անշուշտ, ըստ հարկին երբեմն վիճելով այս կամ այն հեղինակի հետ։

XIV—XV դարերը կարելի է համարել հայ ազնվական տների մանրացման կամ նսեմացման ժամանակաշրջան, հմտորեն նկատել են Կարապետ եպիսկոպոսը, Լ. Բաբայանը, ինչպես նաև Գ. Կիրակոսյանը, մասնավորապես, Հասան-Ջալալյանների կապակցությամբ։ Արցախական աշխարհի հզոր իշխան Հասան-Ջալալ Դոլայի՝ հակամոնղոլական ապստամբության կազմակերպիչներից մեկի եղերական վախճանից հետո (1261 թ.) Հասան-Ջալալյաններն առժամանակ անկում ապրեցին և կրկին քաղաքական ասպարեզ եկան հայ իշխանական տների, մասնավորապես Օրբելյանների աջակցությամբ։

Ինչ վերաբերում է գերագահության խնդրին, ապա, կարծում ենք, Հասան-Ջալալ Դոլան իսկապես գահերեց էր Դոփյանների նկատմամբ (էջ 235), գոնե իր կենդանության օրոք։

Պատմական իրողություն է, որ ազատաբաղձ և այլախոհ իշխանները օտար տիրակալների կողմից ոչնչացվում էին։ Ուստի քաղաքական իրավիճակի փոփոխմամբ առանձին իշխանական տոհմեր կարող էին վերելք ապրել, մյուսները՝ անկում։ Իշխող տների վախճանալը կամ նսեմանալը պայմանավորված էր կոնկրետ քաղաքական իրադրությամբ։

Ցանկանում ենք կատարել մեկ-երկու դիտողություններ։

1. Գանձասարի վանքի առնմոյան գավթի արձանագրության մեջ Հ. Օրբելին դեռ 1909 թ. ընթերցել է «չարհատանս» տերմինը, որը նույնությամբ զետեղված է «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի 5-րդ պրակում (Ե., 1982, էջ 34)։ Ս. Բարխուդարյանն այս ընթերցումը համարել է ընդունելի, թեև առանց մեկնաբանությունների։ Կարծում ենք՝ «չարհատանս» թերևս նշանակում է «չորս կողմով» ամբողջությամբ՝ պարսկերեն «չհար-չորս» և հայերեն «հատ-կտրվածքով» եզրերի բառաբարդեցմամբ։ Գ. Կիրակոսյանն առաջարկում է ընթերցել «սարահաթանս», որը համարյա թե նույն իմաստն է արտահայտում։ Իհարկե, այս առեղծվածը միանգամից կլուծվեր, եթե Թ տառից առաջ ավելացնեինք ընդամենը մեկ տառ՝ Ր և կստանայինք «սարահարթանս»—սարահարթով։

2. Խոսելով Սյունիքի Տարսայիճ մեծ իշխանի որդի, հոր մահից հետո գահերեց հռչակված Էլիկումի մասին՝ մենագրության հեղինակը նշում է, որ այս իշխանը «իր եղբայրներին բաժնեկալվածք տալու ճանապարհով ձգտում էր պահպանել իշխանական այս տան միասնությունը» (էջ 251)։ Ընդհակառակն՝ Էլիկումի հենց այս արարքը նախադրյալը դարձավ Օրբելյան հզոր իշխանապետության տրոհման և քայքայման, ինչին, թվում է, ձգտում էր խորամանկ Արղուն խանը։ Բարեբախտաբար, Գ. Կիրակոսյանն իր միտքը ուղղում է, գրելով. «Տարսայիճի մահից հետո գահերեցության համար մղվող պայքարն ավելի խորացավ և պատճառ դարձավ Օրբելյանների ընդարձակ տիրույթների մասնատման՝ առանձին բաժնեկալվածքների» (էջ 262)։

3. Առանձին հեղինակներից կամ վիմական բնագրերից կատարված քաղվածքները երբեմն ծավալուն են. դրանք կարելի էր սեղմել և թողնել միայն այն հատվածը, որն անմիջաբար վերաբերում է բուն թեմային։

Ընդհանուր առմամբ, ողջ աշխատանքը շարադրված է գեղեցիկ, սահուն հայերենով։ Ճաշակով և տեղին ընտրված են բառերը՝ ռազմերթ, ընթացուղի, փութբերաց և այլն։ Էնկուրսի փոխարեն (պատմական էքսկուրս) կարելի էր օգտագործել անդրադարձ, կաթողիկոսական հրամանի փոխարեն՝ կոնդակ։

Կատարված դիտողություններից և ոչ մեկը դույզն-ինչ չափով չի ազդում այս մնայուն աշխատանքի որակի վրա։ Այն շարադրված է գիտական բարձր մակարդակով, կուռ տրամաբանությամբ և պատմականության սկզբունքով։ Գիրքն ունի արդիական հնչեղություն և դաստիարակիչ նշանակություն։

Դ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր